

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԼԵՎՈՆ ՀԵՆՐԻԿԻ ՆԱԶԱՐՅԱՆ

**ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԴԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թ. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների դոկտոր Ա. Վ.Աբրահամյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու Գ. Ա. Ափրոյան

Առաջատար կազմակերպություն

Վանաձորի Զ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 5-ին ժամը 14⁰⁰-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՅ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի մայիսի 5-ին

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ա. Զ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: ՀՀ շուկայական տնտեսության ներկա պայմաններում մեծացել է ավագ դպրոցի դերը՝ որպես նախամասնագիտացման կարևոր և անհրաժեշտ օղակ. նոր պահանջներ են առաջադրվել ավագ դպրոցի շրջանավարտի մոդելին: Կրթության փիլիսոփայության ժամանակակից ուղղություններում որպես վերջնանպատակ շեշտվում են սովորողների լայն մտահորիզոնի առկայությունը և գործնական բարձր պատրաստվածությունը: Անհրաժեշտություն է զգացվում բարեփոխելու ավագ դպրոցի կրթության բովանդակությունը, վերանայելու նպատակային առաջնահերթությունները, կատարելագործելու ավագ դպրոցում ուսումնական գործունեության կազմակերպման ձևերն ու եղանակները, սահմանելու և հիմնավորելու դրանց իրականացման մանկավարժական պայմանները: Սովորողների ուսումնահետազոտական գործունեությունը բարձրացնում է ոչ միայն ուսումնական գործընթացի արդյունավետությունը, այլև օգնում է սովորողին հարմարվել տեխնոլոգիապես զարգացած արդի հասարակության աշխատաշուկայի մրցակցային պայմաններին: Ուսումնահետազոտական գործունեությունը սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման և ստեղծագործական ու քննադատական մտածողության խթանման միջոց է: ՀՀ ավագ դպրոցների կայացման համատեքստում հիմնախնդիրը շարունակում է մնալ առաջնային պայմանավորված առկա մի շարք **հակասություններով՝**

- ուսումնահետազոտական գործունեության մեթոդական համակարգի մշակման, բնագիտամաթեմատիկական առարկաների բովանդակության բարեփոխման անհրաժեշտության և մյուս կողմից բնագիտամաթեմատիկական հոսքում ավագ դպրոցականների ուսումնահետազոտական աշխատանքների ոչ բավարար կազմակերպման, ուսուցման ուսուցչակենտրոն մոդելի միջև,
- ժամանակակից հասարակության՝ հետազոտական կարողությունների տիրապետող անձի նկատմամբ առկա պահանջարկի և դպրոցի շրջանավարտի ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության ոչ բավարար մակարդակի միջև,
- որակյալ կրթության ապահովման անհրաժեշտության և ավագ դպրոցում շրջանավարտի մոդելի ոչ լիարժեք ձևավորված հայեցակարգի միջև,
- սովորողների գործնական բարձր պատրաստվածության նկատմամբ արդի պահանջների և նրանց տեսական գիտելիքների գերակշռության միջև:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է մեր կողմից բացահայտված հակասություններով, որոնց հիման վրա մեր կողմից ձևակերպվել է հետազոտության հիմնախնդիրը՝ **ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման ապահովող մանկավարժական պայմանների որոշակիացումը և գիտական հիմնավորումը:**

Յետազոտության նպատակն է նշակել և գիտականորեն հիմնավորել բնագիտամաթեմատիկական հոսքում ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Յետազոտության օբյեկտը ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործընթացն է:

Յետազոտության առարկան ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմաններն են:

Յետազոտության վարկածը մեր այն ենթադրությունն է, որ բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումն արդյունավետ կլինի, եթե՝

1. յուրաքանչյուր դասի կտրվածքով ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործընթացը դիտարկվի կոնկրետ խնդրի մակարդակում, հստակ սահմանվեն բնագիտամաթեմատիկական հոսքում ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման նպատակները,
2. բացահայտվեն և որոշակիացվեն բնագիտամաթեմատիկական հոսքում ուսումնահետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքները, կրթական գործընթացում ապահովվեն ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման հիմնական փուլերը,
3. բնագիտամաթեմատիկական ցիկլի առարկաների բովանդակությունն ապահովի սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումը,
4. Սահմանվեն, հիմնավորվեն և կիրառվեն ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանները,
5. հիմնավորվեն և ավագ դպրոցի կրթական գործընթացում ներդրվեն ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման առավել արդյունավետ ձևեր ու եղանակներ:

Յետազոտության հիմնախնդրի նպատակին, առարկային, օբյեկտին, առաջադիր վարկածին համապատասխան որոշվել են հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. Իրականացնել սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական, պատմագիտական գրականության տեսական, համեմատական վերլուծություն:
2. Դիտումների, մանկավարժական զրույցների, անկետային հարցումների միջոցով բացահայտել հետազոտվող հիմնախնդրի արդի վիճակը ՀՀ ավագ դպրոցներում, ուսումնասիրել սովորողների կրթական պահանջմունքները, ուսուցիչների մասնագիտական փորձը և վերաբերմունքը հետազոտվող հիմնախնդրի առնչությամբ:
3. Բացահայտել և հիմնավորել ուսումնահետազոտական գործունեության փուլերը, առանձնահատկությունները, գործառույթները, կազմակերպման սկզբունքները:

4. Կատարել բնագիտամաթեմատիկական ցիկլի առարկաների բովանդակային վերլուծություն և պարզել դրանց հնարավորությունները հիմնախնդրի լուծման ուղղությամբ:
5. Առաջադրել և գիտափորձով հիմնավորել ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Յետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել

սովորողների հետազոտական, ճանաչողական, ինքնուրույն գործունեության խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները(Վ. Ի. Անդրևա, Պ. Ի. Պիդկասիտի, Լ. Ա. Սահակյան և այլք),սովորողների հետազոտական գործունեության կազմակերպման և դրդապատճառների ձևավորման վերաբերյալ հետազոտությունները(Բ. Պ. Եսիպով, Ի. Յ. Լեոնեթ, Տ. Ի. Շամոլվա, և այլք), գործունեության տեսությունը(Լ. Ա. Վիգոտսկի, Ա. Ն. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն և այլք),անձնակողմնորոշված և անձնակենտրոն կրթության գաղափարները (Ի.Ա. Յակիմանսկայա, Ա. Օ. Թոփուզյան, Ջ. Ա. Ասատրյան և այլք), համակարգային մոտեցման մեթոդաբանությունը (Է.Գ. Յուդին, Լ. Թ. Ասատրյան, Ա.Ա. Դուկասյան, և այլք),մտավոր գործողությունների փուլային ձևավորման տեսությունը (Պ. Յա. Գալպերին, Ն. Ֆ. Տալիգինա և այլք):

Յետազոտության անցկացման համար կիրառվել է մանկավարժական հետազոտության հետևյալ մեթոդների համալիրը՝

- ❖ գիտատեսական՝ վերլուծություն, համադրում, համեմատում, ընդհանրացում, վերացարկում, համակարգում, ինչպես նաև պատմահամեմատական մեթոդներ,
- ❖ էմպիրիկ՝ մանկավարժական դիտում, զրույց, անկետային հարցում, մանկավարժական գիտափորձ՝ հաստատող, ձևավորող, ամփոփող փուլերով,
- ❖ վիճակագրական՝ մանկավարժական գիտափորձի տվյալների մաթեմատիկական մշակում, գրաֆիկական պատկերում:

Յետազոտության բազա են հանդիսացել Արզավանդ գյուղի միջնակարգ դպրոցը, Երևանի Ա.Իսահակյանի անվան թիվ 17, Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119, Գ. Մարգարյանի անվան թիվ 94 ավագ դպրոցները:

Յետազոտության անցկացման փուլերը.

Առաջին փուլում (2011թ.-2012թ.) դիտարկվել և վերլուծության են ենթարկվել հետազոտության հիմնախնդրի շուրջ հոգեբանամանկավարժական, փիլիսոփայական և մեթոդական գրականությունը, կրթության նորմատիվային փաստաթղթերը, հետազոտվող հիմնախնդրի վիճակը ժամանակակից ավագ դպրոցի պրակտիկայում:

Երկրորդ փուլում(2012թ.-2013թ.)ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների հիման վրա ծրագրվել և անցկացվել է մանկավարժական գիտափորձը:

Յրրորդ փուլում (2013թ.-2014թ.)ավարտվել է գիտափորձը, վերլուծվել են ստուգողական և փորձարարական խմբերի արդյունքները: Համակարգվել, ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության արդյունքները, շարադրվել և ձևավորվել է ատենախոսությունը:

Յետազոտության գիտական նորույթ.

- ❖ Սահմանվել և գիտականորեն հիմնավորվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորմանը նպաստող մանկավարժական պայմանները
 - ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում անհատագործունեական մոտեցման ցուցաբերում,
 - ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում գործողությունների տրամաբանական հերթագայության ապահովում,
 - ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակի որոշման ցուցանիշների և չափանիշների առկայություն,
 - ուսումնահետազոտական առաջադրանքների համալիրի ներդրում,
 - ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման արդյունավետ ձևերի ու միջոցների ընտրություն,
 - ուսուցչի մասնագիտական համարժեք կոմպետենտության առկայություն:
- ❖ Յստակեցվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործում ուսումնական առարկաների բովանդակային հնարավորությունները:
- ❖ Որոշակիացվել և հիմնավորվել է ավագ դպրոցականների ուսումնահետազոտական գործունեության ընթացքում ձևավորվող ուսումնահետազոտական կարողությունների համալիրը:
- ❖ Հիմնավորվել է ուսումնահետազոտական գործունեության նշանակությունը սովորողների մասնագիտական կողմնորոշման գործում, այդ համատեքստում մեր կողմից սահմանվել են ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման փուլերը:

Յետազոտության տեսական նշանակությունը.

- ❖ Բացահայտվել է ուսումնահետազոտական գործունեության ներուժը ավագ դպրոցականների սուբյեկտային մտածողության կայացման, ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործում:
- ❖ Յետազոտությամբ առաջադրված ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների գիտատեսական հիմնավորումը կհարստացնի մանկավարժության տեսությունը և պրակտիկան նոր տեսական մոտեցումներով:

Յետազոտության գործնական նշանակությունը.

- ❖ Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման տեսական և գործնական հետազոտության հիման վրա առաջարկվող մանկավարժական պայմանները կբարձրացնեն ընդհանուր կրթական գործընթացի արդյունավետությունը ավագ դպրոցում:

- ❖ Հետազոտության նյութերը կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշման ձևավորման հիմնախնդրի լուծմանը:
- ❖ Մշակված ուսումնահետազոտական առաջադրանքները կարող են օգտագործվել ավագ դպրոցում դասավանդող ուսուցիչների կողմից սովորողների ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման գործընթացում:
- ❖ Մշակվել են մեթոդական հանձնարարականներ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական գործունեության արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում է հոգեբանամանկավարժական հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության առարկային, խնդիրներին, նպատակներին համարժեք ընտրված և օգտագործված մեթոդներով, հետազոտության բազայի և փորձարարության մասնակիցների լայն ընդգրկվածությամբ, հետազոտության հիմնական տեսական դրույթների փորձարարական հիմնավորմամբ, գիտափորձի համակարգված բնույթով, ստացված արդյունքների համալիր վերլուծությամբ, վիճակագրական մշակման արդի մեթոդների կիրառմամբ և այդ բնագավառում ատենախոսի անձնական փորձի ներդրումով:

Հետազոտության փորձաքննությունը կատարվել է փորձարկվող դպրոցներում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ փորձագիտական խմբի կողմից «Ասպիրանտների գիտական հետազոտությունների աջակցություն» ծրագրի սահմաններում, տպագրված հոդվածներում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումը ավագ դպրոցի հոսքային ուսուցման կրթական նպատակներին համարժեք գործընթաց է: Այն բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով և կրում է գիտակցված, համակարգված և սուբյեկտային բնույթ:
2. Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունները նրանց մտավոր զարգացման, ստեղծագործական ընդունակությունների դրսևորման և գործնականում գիտելիքների կիրառման ցուցիչներ են, մասնագիտական հետագա գործունեության անցնելու, տարբերույթ իրավիճակներում կողմնորոշվելու երաշխիքներ:
3. Առաջադրված մանկավարժական պայմանները ապահովում են ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման արդյունավետությունը՝ դրանք բարձրացնելով որակական նոր աստիճանի:
4. Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումն ընթանում է ուսումնահետազոտական գործունեության շրջանակներում՝ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի նպատակային համադրմամբ և որոշակի փուլայնությամբ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համա-կարգչային շարվածքի 143 էջ:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, բացահայտված են ուսումնասիրվող խնդրի շուրջ առկա հակասությունները, որոնց հիման վրա սահմանված է հետազոտության հիմնախնդիրը: Ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գիտատեսական, մեթոդաբանական հիմքերը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների վերաբերյալ առկա հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը»**, տրված է հետազոտության հիմնախնդրի պատմագիտական, փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականության տեսական վերլուծությունը: Վերլուծված են հայ և արտերկրյա գիտնականների տեսակետներն ու հայեցակարգային մոտեցումները:

Դիմնավորվում է, որ ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունները ձևավորվում են ուսումնահետազոտական գործունեության ընթացքում և տվյալ գործունեության արդյունքն ու չափանիշն են:

Գիտական գրականության վերլուծությամբ բացահայտվել է, որ ուսումնահետազոտական գործունեության էությունը սովորողների ստեղծագործական, որոնողական գործունեության դրսևորում է՝ ուղղված նրանց համար նոր ուսումնական խնդիրների լուծմանը:

Նշվում է, որ հոգեբանամանկավարժական գրականության մեջ «հետազոտական կարողություն» և «ուսումնահետազոտական կարողություն» հասկացությունների վերաբերյալ միասնական, համընդհանուր ընդունելի, հստակ բնորոշում չկա:

Մեր կողմից ընդունելի է համարվել այն տեսակետը, որ սովորողների կողմից իրականացվող հետազոտություններն ուսումնական են, քանի որ իրականացվում են ուսումնական գործընթացին բնորոշ պայմաններում, ուսումնական առարկաների բովանդակության սահմաններում և բնութագրվում են իրենց բնորոշ առանձնահատկություններով: Ուստի տվյալ ուսումնահետազոտական գործունեության արդյունքում են ձևավորվում ուսումնահետազոտական կարողությունները:

Մանկավարժական գրականության մեջ առկա են ուսումնահետազոտական կարողությունների դասակարգման մի շարք մոտեցումներ:

Մեր կողմից առանձնացվել են հինգ առավել լայն ուսումնահետազոտական կարողություններ՝

1. հետազոտական-հաղորդակցական,
2. հետազոտական-ճանաչողական,
3. հետազոտական-գործունեական,
4. հետազոտական-ստեղծագործական,
5. հետազոտական-կողմնորոշիչ:

Նշված ուսումնահետազոտական կարողությունների մեջ որպես կառուցվածքային բաղադրիչներ մտնում են՝ հետազոտության հիմնախնդիրը և նպատակը բացահայտելու, վարկածը և խնդիրները սահմանելու, հետազոտության ալգորիթմը կառուցելու, դիրքորոշումները փաստարկելու, ըմբռնելու, համեմատելու, վերացարկելու, ընդհանրացնելու, դասակարգելու, առաջնայինը երկրորդայինից զատելու, սարքավորումների, լաբորատոր նյութերի, տեխնիկայի գրականության հետ աշխատելու, դիտարկվող երևույթների միջև օրինաչափությունները տեսնելու, սեփական աշխատանքին հարգանքով վերաբերվելու, այն գնահատելու, աշխատանքի արդյունքները իմաստավորելու, ստացված արդյունքը արժևորելու, թիմային աշխատանքի կարողությունները: Ուսումնահետազոտական կարողությունների ամբողջական տիրապետումը հանգեցնում է սովորողի հետազոտական դիրքորոշման կայացմանը և գրանցում որակական առաջընթաց:

Ուսումնահետազոտական կարողություններն ի վերջո վերածվում են յուրահատուկ անձնային որակների, որոնք իրենց հերթին ապահովում են ոչ միայն ավագ դպրոցականների ուսումնական գործունեությունը, այլև նպաստում են կյանքի տարաբնույթ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և լուծումներ գտնելու հնարությունների զարգացմանը:

«Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական գործունեության փուլերը և առանձնահատկությունները» խորագրով երկրորդ ենթազվիտում հիմնավորվում է, որ ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունները ձևավորվում են նպատակաուղղված, համակարգված և փուլային կերպով:

Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական գործունեության՝ մեր կողմից սահմանված փուլերն են՝

- ուսումնահետազոտական գործունեության մոտիվացիա,
- ուսումնահետազոտական առաջադրանքի ըմբռնում,
- խնդրի լուծման ուղիների մտահղացման մշակում,
- մտահղացման իրականացում գործնականում,
- ուսումնահետազոտական գործունեության կառավարում,
- առաջադրանքի լուծման ստուգում և ներկայացում,
- առաջադրանքի կատարման գնահատում:

Ներկայացված և բնութագրված են հետազոտության շրջանակներում բացահայտված ուսումնահետազոտական գործունեության՝ առանձնահատկությունները՝

- բնագիտամաթեմատիկական առարկաների բովանդակության հիման վրա ուսումնահետազոտական աշխատանքների կազմակերպման հնարավորություն,
- կոլեկտիվ մտածողության հիման վրա կոլեկտիվ ուսումնահետազոտական աշխատանք իրականացնելու նպատակահարմարություն,

- գիտական մտածողության ձևերին համապատասխանություն,
- սովորողների կողմից սուբյեկտային մտածողության դրսևորում,
- ուսումնահետազոտական գործունեության ստեղծագործական բնույթ,
- ուսումնահետազոտական գործունեության հուզազգայական բնույթ,
- մասնագիտական ինքնակողմնորոշում:

Բնագիտամաթեմատիկական առարկաների բովանդակության հիման վրա ուսումնահետազոտական աշխատանքների կազմակերպման հնարավորությունները պարզելու համար ուսումնասիրվել են տարբեր թեմաներ «Կենսաբանություն», «Քիմիա», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ» առարկաներից: Բացահայտվել է, որ առկա է բավարար առարկայական բովանդակային հիմք սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման համար:

Հետազոտությամբ ապացուցվեց, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական գործունեության կազմակերպումը ուսուցման կոլեկտիվ եղանակով գործունեությունը դարձնում է ավելի արդյունավետ: Ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման գործում հիմք ենք ընդունել Մ. Ա. Մկրտչյանի կողմից առաջարկված ուսուցման մարդասիրական կանխադրույթները:

Հիմնավորվում է, որ սովորողի ուսումնահետազոտական աշխատանքը հետապնդում է նախ կրթադաստիարակչական, ապա նոր միայն գիտական նպատակներ:

Սահմանված և նկարագրված սուբյեկտային մտածողության կայացման հիմնական փուլերը արտահայտվում են ուսումնահետազոտական գործունեության մեջ և նպաստում են ավագ դպրոցականների մասնագիտական ինքնակողմնորոշման զարգացմանը:

Ուսումնահետազոտական գործունեության ստեղծագործական բնույթը իր դրսևորումն է ստանում գործունեության հիմնական նպատակի մեջ, այն է՝ սովորողների մտավոր գործունեության անցումը վերարտադրողական մակարդակից ստեղծագործականի:

Ուսումնահետազոտական գործունեության հուզազգայական բնույթը բացահայտելու նպատակով մեր կողմից որոշակիացվել և դիտարկվել են անձնային անհրաժեշտ բնութագրիչները, որոնց առկայությունը պայմանավորում է սովորողի՝ ուսումնահետազոտական գործունեություն իրականացնելու պատրաստականությունը:

Դիտարկված է ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խնդիրը: Հոսքային ուսուցումը մեր հետազոտության շրջանակներում ընկալվել է որպես համրակրթության կազմակերպման բարձրագույն ձև, որի հիմնական նպատակն է սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացումը և նախապատրաստումը հետագա մասնագիտական գործունեությանը: Բնութագրված են ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշման փուլերը:

«Ուսումնահետազոտական գործունեության գործառույթները և կազմակերպման սկզբունքները» խորագրով երրորդ ենթազվիտում հիմնավորվում է, որ ուսումնահետազոտական գործունեությունը՝ որպես ավագ դպրոցականների մտավոր, պրակտիկ և ինքնուրույն գործունեության տեսակ,

նպաստում է պրոբլեմային իրավիճակներում սովորողների կողմնորոշմանը, մտածողության ակտիվացմանը, ուսումնառության նպատակաուղղվածությանը, տրամաբանական եզրահանգումներ կատարելու կարողության ձևավորմանը: Դիտարկվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն ուսումնառիտազոտական գործունեության սկզբունքների որոշակիացումը: Այդ նպատակով հետազոտության շրջանակներում մեր կողմից առանձնացվել են ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական գործունեության հիմնական սկզբունքները՝

1. կարողությունների փուլային ձևավորման,
2. խմբային, կոլեկտիվ և անհատական գործունեությունների համադրման,
3. ուսումնական և արտաուսումնական գործունեությունների համադրման,
4. ինքնիրացման,
5. առարկայական բովանդակահեռության,
6. ուսումնական փորձի հիմնարարության:

Յետազոտության շրջանակներում բացահայտվեց, որ կարողությունների փուլային ձևավորման սկզբունքը ենթադրում է նպատակաուղղվածություն, համակարգայնություն և աստիճանականություն:

Խմբային, կոլեկտիվ և անհատական գործունեության համադրման սկզբունքը ենթադրում է ուսուցման կազմակերպման խմբային եղանակից անցում կոլեկտիվ և անհատական եղանակի, այնուհետև հակառակը:

Ուսումնական և արտաուսումնական գործունեության համադրման սկզբունքն ըմբռնվում է որպես ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական գործունեության փորձի հարստացում և համապատասխան կարողությունների ձևավորվածության արդյունավետության բարձրացում:

Յետազոտության շրջանակներում բնութագրվում է, որ ինքնիրացման սկզբունքի համաձայն՝ ուսումնառիտազոտական գործունեությունը պետք է բնականոն պայմաններ ապահովի անձնային որակների կատարելագործման, փորձի կուտակման, ազատ ստեղծագործական ինքնիրացման համար:

Առարկայական բովանդակահեռության սկզբունքը ենթադրում է սովորողների ուսումնառիտազոտական գործունեության իրականացման համար բնագիտամաթեմատիկական առարկաների բովանդակային հնարավորություններ:

Ուսումնական փորձի հիմնարարության սկզբունքը բացահայտելու նպատակով դիտարկվել է ճակատային ուսումնական փորձի կիրառումը ավագ դպրոցի 11-րդ դասարանում քիմիայի դասաժամին:

Առանձնացվել և բնութագրվել են ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական գործունեության գործառնությունները, հատկանիշները:

Արտախոսության երկրորդ՝ **«Ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների փորձարարական հիմնավորումը»** խորագիրը կրող գլխի, առաջին ենթագլխում՝ **«Ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանների բնութագիրը»**, ներկայացված և բնութագրված են ավագ դպրոցականների ուսումնառիտազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայման-

ները: Մեր հետազոտության շրջանակներում մանկավարժական պայմանները դիտարկվում են որպես անհրաժեշտ կրթական միջավայրի ապահովման գրավական:

Հիմնավորված և գծապատկերով ցույց է տրված, ուսումնահետազոտական գործունեության անմիջական կախվածությունը անհրաժեշտ մանկավարժական պայմաններից: Մեր կողմից որոշակիացված և գիտափորձով հաստատված ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման մանկավարժական պայմաններն են՝

- ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում անհատագործունեական մոտեցման ցուցաբերումը,
- ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում գործողությունների տրամաբանական հերթագայության ապահովումը,
- ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակի որոշման ցուցանիշների և չափանիշների առկայությունը,
- ուսումնահետազոտական առաջադրանքների համալիրի ներդրումը,
- ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման արդյունավետ ձևերի ու միջոցների ընտրությունը:
- ուսուցչի մասնագիտական համարժեք կոմպետենտության առկայությունը,

Անհատագործունեական մոտեցման ցուցաբերումը ենթադրում է, որ անհրաժեշտ ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործում անհրաժեշտ է հիմնվել ավագ դպրոցականի անձնային առանձնահատկությունների և կրթական պահանջմունքների վրա:

Ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում գործողությունների տրամաբանական հերթագայությունը հնարավոր է ապահովել գործողությունների կազմի և հաջորդականության մասին գիտելիքներով, որոնք թույլ են տալիս սովորողներին նոր իրավիճակներում ստեղծագործաբար կիրառել տվյալ ուսումնահետազոտական կարողությունները:

Հետազոտության արդյունքում մեր կողմից սահմանվել են ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության դրդապատճառային, իմացական, գործունեական և հարմարվողական չափանիշները:

Ուսումնահետազոտական առաջադրանքների համալիրի ներդրումը ենթադրում է դրանց ամբողջական և համակարգված կիրառում ավագ դպրոցի ուսումնական գործընթացում: Տվյալ առաջադրանքների մեջ կարող են մտնել ուսումնահետազոտական վարժությունները, խնդիրները, լաբորատոր, գործնական, արտադասարանական աշխատանքները, հանձնարարականները: Տվել ենք «ուսումնահետազոտական խնդիր» հասկացության սահմանումը:

Սովորողների ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման արդյունավետ ձևերի ու միջոցների ընտրությունը ենթադրում է ուսումնահետազոտական գործունեության տարբեր ձևերի ու միջոցների ընտրություն, համադրում և կիրառում:

Ուսուցչի մասնագիտական համարժեք կոմպետենտության առկայություն ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների

ձևավորման մանկավարժական հիմնական պայմաններից մեկն է: Ուսումնահետազոտական աշխատանքում սովորողների հաջողությունը կախված է ուսուցչի մասնագիտական պատրաստվածության մակարդակից: Մեր կողմից սահմանվել են ուսուցչին ներկայացվող հիմնական պահանջները և ուսումնահետազոտական գործունեության յուրաքանչյուր փուլում ուսուցչի կոնկրետ գործառույթները:

Երկրորդ ենթազխում՝ «Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման փորձարարական աշխատանքների կազմակերպման ընթացքը», նկարագրված են մանկավարժական գիտափորձի փուլերը: Առանձնացված և բնութագրված են սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակները, ինչպես նաև ձևավորվածության մակարդակների, ցուցանիշների և չափանիշների փոխադարձ կապը և կախվածությունը մանկավարժական պայմաններից: Ներկայացված են հետազոտության շրջանակներում մշակված սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորմանը նպաստող ուսումնահետազոտական առաջադրանքների օրինակները կենսաբանությունից, քիմիայից, հանրահաշիվից և երկրաչափությունից:

Մանկավարժական գիտափորձը ընթացել է փորձարարական հետազոտության հաստատող, ձևավորող և ամփոփիչ փուլերով: Այն հիմնվել է անհրաժեշտ մանկավարժական պայմանների ապահովմամբ պայմանավորված՝ սովորողների ուսումնահետազոտական կարողությունների նպատակաուղղված ձևավորման և ուսումնահետազոտական գործունեության աստիճանական բարդացման վրա: Առանձնացվել է ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման երկու փորձարարական փուլ, որոնք համապատասխանաբար իրականացվել են ավագ դպրոցի 11-րդ և 12-րդ դասարաններում:

Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական գործունեությունը կազմակերպվել է ուսումնական և արտաուսումնական աշխատանքների տրամաբանական համադրման եղանակով: Խմբային, կոլեկտիվ և ինքնուրույն ուսումնահետազոտական գործունեության փոխադարձ կապի ապահովման պայմաններում խմբային գործունեությունից աստիճանական անցում է կատարվել կոլեկտիվ և ինքնուրույն ուսումնահետազոտական գործունեության և հակառակը: Յուրաքանչյուր փորձարարական փուլում կիրառվել են ուսումնահետազոտական գործունեության կազմակերպման, ուսումնահետազոտական առաջադրանքների որոշակի ձևեր, տեսակներ և յուրաքանչյուր փուլում ձևավորվել են կոնկրետ ուսումնահետազոտական կարողություններ:

Յաստատող գիտափորձի արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ գիտափորձի սկզբում սովորողները դժվարանում էին բացահայտել երևույթների օրինաչափությունները, համադրել մասնավոր երևույթները, որոնք տարբեր փաստերի ընդհանրությունները և վեր հանել դրանցում առկա տրամաբանական կապերը: Այդ ամենը թույլ չէր տալիս առաջադրել ուսումնահետազոտական աշխատանքի վարկածներ: Ձևավորող գիտափորձի առաջին փուլում (11-րդ դասարան) ուսումնահետազոտական գործունեությունը իրականացվել է հիմնականում ուսուցման կազմակերպման խմբային եղանակով: Ուսումնահետազոտական խնդիրները, վարժությունները և այլ հետազոտական աշխատանքները թույլ են տվել ձևավորել ըմբռնելու, համեմատելու, վերա-

ցարկելու, ընդհանրացնելու, դասակարգելու, առաջնայինը երկրորդայինից զատելու, դիտարկվող երևույթների միջև օրինաչափությունները տեսնելու հետազոտական-ճանաչողական կարողությունները: Այս փուլում հիմնական շեշտը դրվել է հետազոտական-ճանաչողական կարողությունների վերջնական ձևավորման և հետազոտական-հաղորդակցական կարողությունների զարգացման վրա: Տվյալ փուլում, աստիճանաբար ավելացվել և բարդացվել են ուսումնահետազոտական լաբորատոր և գործնական աշխատանքները: Ուսումնահետազոտական լաբորատոր աշխատանքների ներառումը հնարավորություն է տվել ոչ միայն անցում կատարել ուսուցման խմբային եղանակից դեպի անհատական և ուսուցման կոլեկտիվ եղանակների, այլև ստեղծել նախադրյալներ սովորողների հետազոտական-գործունեական, հետազոտական-ստեղծագործական և հետազոտական-կողմնորոշիչ կարողությունների ձևավորման համար:

Սահմանված մանկավարժական պայմանների ներդրման պարագայում ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակը զգալիորեն բարձրացել է, ուստի ձևավորող գիտափորձի երկրորդ փուլում (12-րդ դասարան) ուսումնահետազոտական առաջադրանքները աստիճանաբար բարդացվել են: Ուսումնահետազոտական առաջադրանքները բաղկացած են եղել տեսական, օլիմպիադային հարցերից, ուսումնահետազոտական-լաբորատոր և արտադասարանական աշխատանքներից, որոնք պահանջում էին ինքնուրույն հետազոտության անցկացում: Ուսումնական առարկաների բովանդակային նպատակահարմարությունից ելնելով՝ բնության զրկում անցկացվել են արտադասարանական պրակտիկումներ: Առաջադրված ուսումնահետազոտական առաջադրանքները լուծելու համար ավագ դպրոցականները դրսևորել են ինքնուրույնության բավականին բարձր մակարդակ:

Տվյալ փուլում ձևավորվել և զարգացել են լաբորատոր նյութերի, տեխնիկայի, սարքավորումների, գրականության, հետ աշխատելու հետազոտական-գործունեական կարողությունները: Իրականացվող կոլեկտիվ ուսումնահետազոտական աշխատանքները թույլ են տվել ձևավորել հետազոտության հիմնախնդիրը և նպատակը բացահայտելու, վարկածը և խնդիրները սահմանելու, գործունեության ալգորիթմը կառուցելու հետազոտական-ստեղծագործական կարողությունները: Ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի կիրառման պայմաններում վերջնականորեն ձևավորվել են էթիկայի նորմերին հետևելու, թիմային աշխատանքի, դիրքորոշումները փաստարկելու հետազոտական-հաղորդակցական կարողությունները: Բնության երևույթների ուսումնասիրությանն ուղղված արտադասարանական ուսումնահետազոտական պրակտիկումը և ավագ դպրոցականների «Երիտասարդ բնագետ» արտաուսումնական խմբակը ունեցել են իրենց նպատակը, խնդիրները, բովանդակությունը, կազմակերպման սկզբունքները, մեթոդները, միջոցներն ու ձևերը: Տվյալ փուլում սահմանված մանկավարժական պայմանների առկայությամբ և ներգործությամբ նպատակաուղղված զարգացել են նաև հետազոտական-հաղորդակցական և հետազոտական-գործունեական կարողությունները, ձևավորվել են ավագ դպրոցականների սեփական աշխատանքին հարգանքով վերաբերվելու, այն գնահատելու, աշխատանքի արդյունքները

իմաստավորելու, ստացված արդյունքը արժևորելու հետազոտական-կողմնորոշիչ ինչպես նաև հետազոտական-ստեղծագործական կարողությունները:


Երրորդ ենթագլխում՝ «Ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորմանը ուղղված փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը», ներկայացված են ավագ դպրոցականների և դասավանդող ուսուցիչների հետ անցկացված անկետային հարցումներից և մանկավարժական զրույցների ու դիտումների արդյունքները: Բացահայտվել են սովորողների հիմնական կրթական պահանջմունքները և ուսուցիչների մասնագիտական վերաբերմունքը հետազոտության հիմնախնդրի նկատմամբ: Ներկայացված է գիտափորձից ստացված արդյունքների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունը:

Անցկացված հարցումների և առաջադրված ուսումնահետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծությունից ակնհայտ է դառնում ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման կախվածությունը սահմանված մանկավարժական պայմաններից: Ներկայացված են հետազոտության արդյունքների վիճակագրական և մաթեմատիկական վերլուծության տվյալները /աղյուսակ 1, 2, գծապատկեր 1, 2/:

Աղյուսակ 1

Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակների համեմատական պատկերը (11-րդ դասարան)

Քանակ (%)	Ստուգողական խումբ		Փորձարարական խումբ	
	Գիտափորձի սկիզբ	Գիտափորձի վերջ	Գիտափորձի սկիզբ	Գիտափորձի վերջ
Բարձր	7	10	6	12
Միջին	21	26	23	42
Ցածր	72	64	71	46




Գծապատկեր 1. Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակների համեմատական պատկերը (11-րդ դասարան):

Ուսումնահետազոտական գործունեության առաջին փուլը կազմակերպվել է 11-րդ դասարաններում՝ ուսուցման կազմակերպման խմբային եղանակի և ընտրված ուսումնահետազոտական առաջադրանքների հիման վրա: Փորձնական ուսումնահետազոտական աշխատանքները պարունակում էին հինգ տեսական ուսումնահետազոտական խնդիր, օլիմպիադային երեք և երկու լաբորատոր առաջադրանքներ: Ցածր, միջին ու բարձր մակարդակների հարաբերակցությունը փորձարարական խմբում գիտափորձի առաջին փուլի սկզբում հետևյալն էր՝ 29%:71% ~1/3, գիտափորձի ավարտից հետո ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակների համահարաբերակցությունը փոխվեց՝ 54%:46%~1/1: Գիտափորձի ավարտին ստուգողական խմբում միջին ու բարձր մակարդակների տիրապետող ավագ դպրոցականների քանակը միասին կազմում էր 36%, փորձարարական խմբում այն կազմեց 54%, այսինքն՝ 1.5 անգամ ավելի: Գիտափորձի արդյունքում հիմնական աճ գրանցվեց սովորողների հետազոտական-ճանաչողական և հետազոտական-գործունեական կարողություններում:

Աղյուսակ 2

Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակների համեմատական պատկերը (12-րդ դասարան)

Քանակ (%)	Ստուգողական խումբ		Փորձարարական խումբ	
	Գիտափորձի սկիզբ	Գիտափորձի վերջ	Գիտափորձի սկիզբ	Գիտափորձի վերջ
Բարձր	10	14	12	23
Միջին	26	30	42	57
Ցածր	64	56	46	20



Գծապատկեր 2.Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակների համեմատական պատկերը (12-րդ դասարան):

Ուսումնահետազոտական գործունեության երկրորդ փուլը ընթացել է 12-րդ դասարաններում: Հետազոտությամբ ստացված տվյալներից երևում է, որ

գիտափորձի երկրորդ փուլում աճել են ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության և միջին, և բարձր մակարդակները, ընդ որում դրանք աճել են հաջորդաբար: Ցածր մակարդակի կրճատման հաշվին նախ աճել է միջին մակարդակը՝ մինչև 68%, իսկ միջին մակարդակի հաշվին այնուհետև աճել է բարձր մակարդակը: Գիտափորձի տվյալ փուլում ուսումնահետազոտական գործունեությունը կազմակերպվել է խմբային, կոլեկտիվ և անհատական ձևերի համադրմամբ, ինչը թույլ է տվել ձևավորել հետազոտական-ստեղծագործական և հետազոտական-կողմնորոշիչ կարողությունները:

Երկրորդ փուլում փորձնական ուսումնահետազոտական աշխատանքները ավելի բարդ էին և պարունակում էին երկու արտադասարանական հանձնարարություն, երկու առաջադրանք, որոնք տրվում են առարկայական օլիմպիադայի ժամանակ, երեք լաբորատոր առաջադրանքներ և երեք ուսումնահետազոտական խնդիր: Գիտափորձի վերջում միջին և բարձր մակարդակների ընդհանուր ցուցանիշը ստուգողական խմբում կազմեց 44%՝ չհատելով 50%-ի շեմը, իսկ փորձարարական խմբում՝ 80 %, այսինքն՝ մոտ երկու անգամ ավել, քան ստուգողական խմբում:

Այսպիսով՝ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում, առաջադրված մանկավարժական պայմանների ապահովման պարագայում, սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործընթացի դինամիկայի հետազոտությունը ցույց տվեց, որ գիտափորձի վերջում զգալիորեն բարձրացել է այդ կարողությունների ձևավորվածության մակարդակը: Դինամիկ աճ նկատվեց ինչպես 11-րդ, այնպես էլ 12-րդ դասարանների սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորվածության մակարդակներում:

Այսպիսով, ելնելով գիտափորձի արդյունքների վերլուծությունից՝ կարելի է փաստել, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման անհրաժեշտ մանկավարժական պայմանների ապահովման արդյունքում խթանվում է սովորողների ուսումնահետազոտական գործունեությունը, որը և հիմք է հանդիսանում նրանց համապատասխան կարողությունների արդյունավետ ձևավորման համար:

Մեր հետազոտության հիմնախնդրի շրջանակներում առկա տեսական դրույթների և փորձարարական աշխատանքների վերլուծությունը թույլ տվեց անելու հետևյալ **եզրակացությունները**:

1. Փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գրականության վերլուծությունը ցույց տվեց, որ ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունները կարող են նպատակաուղղված ձևավորվել համակարգված ուսումնահետազոտական գործունեության արդյունքում:

2. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման հոգեբանամանկավարժական հիմքերի վերլուծությունը և անցկացված հետազոտությունները թույլ տվեցին բացահայտել ու սահմանել այդ գործընթացի առանձնահատկությունները, կազմակերպման հիմնական սկզբունքները և գործառույթները:

3. ՀՀ ավագ դպրոցներում հետազոտվող հիմնախնդրի արդի վիճակի ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական գործունեության և ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման հնարավորությունները՝ հենվող ուսումնական առարկաների ծրագրերով և չափորոշիչներով սահմանված բովանդակային հենքի վրա:

4. Սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումն ավագ դպրոցում կրթության տվյալ աստիճանի խնդիրներից է, որի իրացման պարագայում բավարարվում են սովորողների անձնային և մասնագիտական պահանջները՝ նպաստելով նրանց մասնագիտական կողմնորոշմանը և հետագա սոցիալականացմանը:

5. Հետազոտությանը առաջադրված և գիտափորձով հիմնավորված մանկավարժական պայմաններն ապահովում են ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների արդյունավետ ձևավորումը, որը ունի փուլային ընթացք:

6. Հետազոտական աշխատանքները թույլ տվեցին փաստել, որ ավագ դպրոցականների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորումը ենթադրում է ուսումնական և արտաուսումնական, խմբային, կոլեկտիվ և անհատական ուսումնական գործունեության կազմակերպման ձևերի, ստեղծագործական – հետազոտական առաջադրանքների նպատակաուղղված համադրում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. Նազարյան Լ. Հ., Ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման արդիականությունը ՀՀ ավագ դպրոցներում: «Մանկավարժական միտք», №3-4, Երևան, 2013թ., էջ 66-72:
2. Նազարյան Լ. Հ., Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման առանձնահատկությունները: Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, պրակ 1-ին, Երևան, 2013թ., էջ 346-350:
3. Նազարյան Լ. Հ., Ուսումնական առարկաների բովանդակային հնարավորությունները սովորողների ուսումնահետազոտական կարողությունների ձևավորման գործում: «Մանկավարժություն», № 6, Երևան, 2013թ., էջ 34-41:

Назарян Левон Генрихович
ФОРМИРОВАНИЕ УЧЕБНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УМЕНИЙ
УЧАЩИХСЯ В ЕСТЕСТВЕННО-МАТЕМАТИЧЕСКОМ ПОТОКЕ СТАРШЕЙ
ШКОЛЫ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 – “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 5-го июня 2014г. в 14⁰⁰ на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В нынешних условиях рыночной экономики РА выросло значение старшей школы как важное и необходимое звено предспециализации. Представлено новое требование на модель выпускника старшей школы. В современных направлениях философии образования в качестве конечного результата принимается наличие широкого диапазона мышления и высокая, практическая готовность учащихся. Возникла необходимость реформирования содержания образования старшей школы, пересмотра намеченных целей, совершенствования форм и способов организации учебной деятельности, определения и обоснования необходимых педагогических условий для реализации этого процесса. Учебно-исследовательская деятельность повышает не только эффективность учебного процесса, но и помогает учащимся адаптироваться к конкурентным условиям рынка труда в современном технологически развитом обществе. Учебно-исследовательская деятельность является средством формирования учебно- исследовательских умений и стимулирования творческого, критического мышления учащихся.

В контексте становления старшей школы РА проблема продолжает оставаться первоочередной, обусловленной рядом разногласий. На их основе была сформулирована **основная проблема исследования**, то есть определение и научное обоснование педагогических условий, необходимых для формирования учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы.

Цель исследования- Разработать и научно обосновать педагогические условия формирования учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы.

Объект исследования- процесс формирования учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы.

Предметом исследования являются педагогические условия формирования учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы.

Научная новизна исследования:

- ❖ Сформированны и научно обоснованы педагогические условия, способствующие формированию учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы.

- Проявление личностно-деятельностного подхода в организации учебно-исследовательской деятельности,
 - Обеспечение логического распорядка действий в организации учебно-исследовательской деятельности,
 - Наличие критерий и показателей определения уровня сформированности учебно-исследовательских умений,
 - Инвестирование комплекса учебно-исследовательских задач,
 - Выбор результативных форм и способов организации учебно-исследовательской деятельности,
 - Наличие профессиональной соответствующей компетентности учителя.
- ❖ Уточнены возможности содержания учебных предметов в естественно-математическом потоке старшей школы. по формированию учебно-исследовательских умений.
 - ❖ Определен и обоснован комплекс учебно-исследовательских умений которые формируются в процессе учебно-исследовательской деятельности старших школьников.
 - ❖ Обосновано значение учебно-исследовательской деятельности по профессиональной ориентации учащихся, в этом контексте сформированы этапы профессиональной ориентации старших школьников.

Теоретическое значение исследования:

- ❖ Выявлен потенциал учебно-исследовательской деятельности по установлению субъектного мышления старших школьников в деле результативной организации творческой и самостоятельной работы.
- ❖ Научно-теоретическая обоснования педагогических условий формирования учебно-исследовательских умений учащихся в естественно-математическом потоке старшей школы, выдвинутые исследованием, обогащают теорию и практику педагогики.

Практическое значение исследования:

- ❖ Предлагаемые на базе теоретического и практического исследований, педагогические условия формирования учебно-исследовательских умений учащихся, повысят результативность общего образовательного процесса старшей школы.
- ❖ Материалы исследования будут способствовать решению проблемы профессиональной ориентации учащихся.
- ❖ Разработанные учебно-исследовательские задачи могут быть использованы учителями в процессе преподавания в старшей школе для формирования учебно-исследовательских умений учащихся.
- ❖ Разработаны методические рекомендации результативной организации учебно-исследовательской деятельности учащихся в естественно-математическом потоке старшей школы.

Достоверность и обоснованность исследования обеспечиваются анализом психолого-педагогических концепций, систематическим характером эксперимента, комплексным анализом полученных результатов и использованием современных статистических методов обработки.

По теме диссертации опубликовано 3 статьи.

Levon Henrik Nazaryan
**PEDAGOGICAL CONDITIONS FOR LEARNERS' TEACHING AND
RESEARCH SKILLS FORMATION IN NATURAL SCIENCES AND
MATHEMATICS ACADEMIC GROUPS AT HIGH SCHOOL**

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 –
“Theory and history of pedagogy”.

The defense of the thesis will take place on 5 June, 2014 at 14⁰⁰ at the meeting of
The specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Kh.
Abovyan Armenian State Pedagogical University.
(Address: Yerevan 0010, Tigran Mets str. 17)

SUMMARY

The relevance of the research: Under the present-day conditions of market economy in the Republic of Armenia the role of high school as an important pre-specialization stage has increased dramatically and the graduate's model must meet new demands. In the contemporary directions of Philosophy of education learner's broaden outlook and high level of practical training are emphasized as final results. Therefore, it is necessary to change the contents of high school education, to review the target priorities, to refine the ways and means of academic process organization in high schools, to define and substantiate the necessary pedagogical conditions for their realization. The teaching and research activity not only increases the productivity of the academic process, but also helps learners to acclimate to our modern technologically developed society's competitive labor market environment. Teaching and research activity as means of forming teaching and research skills and simulate creative and critical thinking.

Within the context of the RA high schools' formation this problem still retains its primary importance due to a range of existent contradictions. Based on them, we formulated the subject-matter of the given research: the identification and scientific substantiation of the pedagogical conditions, ensuring the formation of learners' teaching and research skills in Natural Sciences and Mathematics academic groups at high school.

The aim of the research is to develop and scientifically substantiate the pedagogical conditions of learners' teaching and research skills formation in Natural Sciences and Mathematics academic groups at high school.

The object of the research is the process of learners' teaching and research skills' formation in Natural Sciences and Mathematics academic groups at high school.

The subject of the research is the pedagogical conditions for learners' teaching and research skills formation in Natural Sciences and Mathematics academic groups at high school.

The scientific novelty of the research is in the fact that:

- ❖ The pedagogical conditions fostering the formation of learners' teaching and research skills in Natural sciences and Mathematics academic groups at high school have been defined and scientifically substantiated.
 - Manifestation of personality-activity approach in the organization of teaching and research activities,

- Providing of logical sequence of actions in organization of teaching and research activities,
- Availability of criteria and indicators to measure the level of teaching and research skills' formation,
- Investment of complex teaching and research tasks,
- Selection of effective forms and methods for organization of teaching and research activity.
- Availability of professional appropriate competence of teacher.
- ❖ The potential of Natural sciences and Mathematics groups' academic subjects contents for high-school learners' teaching and research skills formation has been specified.
- ❖ The complex of teaching and research skills that are formed in the process of learners' teaching and research activity, has been defined and justified.
- ❖ The meaning of teaching and research activity in the learners' professional orientation has been substantiated.

The theoretical value of the research

- ❖ The teaching and research activity's potential in the formation of thinking of individual, organization of creative and independent work of high school learners has been uncovered.
- ❖ Scientific theoretical justification of the pedagogical conditions of forming learners' teaching and research skills in Natural sciences and Mathematics groups of high school, substantiated in the given work, will enrich the theory and practice of pedagogy.

The practical value of the research

- ❖ The efficient pedagogical conditions for learners' teaching and research skills formation, suggested on the base of the theoretical and practical study, will increase the overall productivity of the academic process in high schools.
- ❖ The materials of the research will promote to solve the problem of students' professional determination.
- ❖ The developed teaching and research tasks can be used by teachers in high schools to form the teaching and research skills of learners.
- ❖ Methodological tasks for productive organization of teaching and research skills for high school. Natural Sciences and Mathematics groups' learners have been developed.

Reliability and validity of the research was provided by the complex analysis of psycho-pedagogical concepts equivalent to the particular subject taught, by the goals and objectives which are justified by experimental methods of theoretical importance, as well as through systematic studies, modern statistical methods and complex result analysis of the processing.

3 scientific-methodological articles about thesis were published.



